Հավելված N 1
ՀՀ կառավարության 2025 թվականի
դեկտեմբերի 25-ի N 1979 - Ն որոշման

ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՓԱԹԵԹԸ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Առողջության ապահովագրության փաթեթը (այնուհետև՝ ԱՓ) մշակված է «Առողջության համընդհանուր ապահովագրության (այսուհետ՝ ԱՀԱ) մասին», «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքների դրույթների, այլ հարակից օրենքների և ենթաօրենսդրական ակտերի հիման վրա:
2. ԱՓ ներառում է բժշկական օգնություն և սպասարկում համարվող խորհրդատվական, կանխարգելիչ, բուժական, դեղորայքային օգնության ցուցաբերման, ախտորոշիչ հետազոտությունների, վերականգնողական սուր և ենթասուր բուժման ծառայությունները:
3. ԱՓ-ում նշված ծառայությունները տրամադրվում են առողջության համընդհանուր ապահովագրություն ունեցող բոլոր անձանց՝ ապահովագրվածների առողջական կարիքները պատշաճ կերպով բավարարելու նպատակով:
4. ԱՓ-ում նշված ծառայությունների մատուցումն իրականացվում է Առողջության համընդհանուր ապահովագրության հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) հետ պայմանագիր կնքած բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպությունների, դեղատների կողմից:
5. Բժշկական օգնության և սպասարկման յուրաքանչյուր տեսակի մատուցման պայմանները և վայրը հրապարակվում են Հիմնադրամի կողմից: Ապահովագրված անձը ծառայությունների ստացման նպատակով՝ համապատասխան ուղեգրի առկայության դեպքում, կարող է ընտրել տվյալ ծառայություն մատուցողին՝ աշխարհագրորեն իրեն մոտ վայրում:
6. Բժշկական օգնության և սպասարկման տեսակները ներառում են նախաբժշկական օգնությունը, շտապ և անհետաձգելի բժշկական օգնությունը, արտահիվանդանոցային պայմաններում իրականացվող բժշկական օգնությունը, հիվանդանոցային պայմաններում իրականացվող բժշկական օգնությունը:

7. Բժշկական ծառայություններ մատուցողներն ապահովում են ԱՓ-ում ներառված ծառայությունների մատուցումն ըստ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության (այսուհետ՝ ԱՆ) կողմից հաստատված գործելակարգերի, իսկ դրանց բացակայության դեպքում համապատասխան մասնագիտացված ասոցիացիայի կողմից առաջարկվող միջազգային կլինիկական ուղեցույցների հիման վրա:

ԳԼՈՒԽ 2. ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՓԱԹԵԹԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

8. ԱՓ-ում ներառվում են Առողջապահության Համաշխարհային կազմակերպության (այնուհետև՝ ԱՀԿ) կողմից Հիվանդությունների միջազգային դասակարգման 10-րդ վերանայման (այնուհետև՝ նաև ՀՄԴ 10) այն վիճակները և հիվանդությունները, որոնք համաձայն պաշտոնական վիճակագրության հանդիսանում են Հայաստանի Հանրապետությունում բնակչության համար հիվանդությունների, մահացության և հաշմանդամության հիմնական պատճառ:
9. ԱՓ-ում ներառված ծառայությունները պետք է հիմնավորված լինեն ՀՄԴ 10-ի համապատասխան հիվանդության խմբին պատկանող ախտորոշման քառանիշ կոդով սահմանված հիվանդությամբ կամ վիճակով՝ համաձայն հավելված 2–ի, ինչպես նաև արտահիվանդանոցային պայմաններում դեղերի տրամադրման համար հիվանդություններով և վիճակներով՝ համաձայն հավելված 3–ի:
10. ԱՓ-ում փոփոխությունները կատարվում են ԱՆ կողմից: Նոր ծառայություններ փաթեթում ներառելու համար հիմք են ընդունվում հետևյալ հանգամանքների միաժամանակյա առկայությունը.
    1) առաջարկվող ծառայությունները ծախսարդյունավետ են և ապահովում են բուժման տևողության կրճատումը, ապաքինման կամ հետվիրահատական ապաքինման ժամկետի կրճատումը, բժշկական օգնության և սպասարկման ծառայությունը տրամադրելուց հետո անհրաժեշտ այցերի թվի կրճատումը, ժամանակավոր անաշխատունակության տևողության օգտագործման ենթակա դեղերի քանակի կրճատումը.
    2) առաջարկվող ծառայության հասանելիությունը պլանային դեպքերում հնարավոր է ապահովել առավելագույնը երկու ամիս հերթագրման ժամկետը չգերազանցելով.

3) առաջարկվող ծառայության հատուցման առավելագույն գինը չի գերազանցում համարժեք ծառայության հատուցման գնի կրկնակին:

ԳԼՈՒԽ 3. ԱՀԱ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՁԵՎԵՐԸ

11. ԱՓ-ով նախատեսված բժշկական օգնությունը և սպասարկումն իրականացվում է հետևյալ պայմաններում.

1) բժշկական կազմակերպությունից դուրս.

ա. շտապօգնության կանչի վայրում, ինչպես նաև տրանսպորտում՝ բժշկական տարհանման ժամանակ,

բ. բնակչի բնակության վայրում, եթե ապահովագրված անձը ունի շարժունակության խնդիր,

2) բժշկական կազմակերպությունում.

ա. արտահիվանդանոցային պայմաններում՝ շուրջօրյա բժշկական հսկողություն և բուժում չպահանջող դեպքերում՝ ներառյալ առաջնային բժշկական օգնությունը, վիրահատական միջամտությունները, որոնք կարող են մատուցվել ցերեկային ստացիոնարի պայմաններում (ցերեկային ժամերին բժշկական հսկողություն և բուժում ապահովելու պայմաններով, որոնք չեն պահանջում շուրջօրյա բժշկական հսկողություն և բուժում).

բ. հիվանդանոցային պայմաններում, երբ անհրաժեշտ են շուրջօրյա բժշկական հսկողություն և բուժում: Հիվանդանոցային պայմաններում իրականացվում է մասնագիտացված բժշկական օգնությունը՝ որպես ախտորոշման և բժշկական առանձնահատուկ մեթոդների, այդ թվում՝ սահմանափակ հասանելիությամբ բժշկական օգնության և սպասարկման տեսակների:

12. Բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման ձևերն են՝

1) շտապ՝ բժշկական օգնություն, որը մատուցվում է հանկարծակի արտահայտված սուր հիվանդությունների, վիճակների, քրոնիկ հիվանդությունների սրացման դեպքերում, որոնք անմիջական վտանգ են ներկայացնում ապահովագրված անձի կյանքի համար,

2) անհետաձգելի՝ բժշկական օգնություն, որը մատուցվում է հանկարծակի սուր հիվանդությունների, վիճակների, քրոնիկ հիվանդությունների սրացման դեպքերում՝ ապահովագրված անձի կյանքին ակնհայտ սպառնալիքների նշաններով,

3) պլանային՝ բժշկական օգնություն, որն ուղղված է ապահովագրված անձի առողջության բարելավմանը, և որի հետաձգումը որոշակի ժամանակով չի առաջացնի ապահովագրված անձի առողջական վիճակի վատթարացում, կյանքին կամ առողջությանը վտանգ չի հանդիսանա:

ԳԼՈՒԽ 4. ԱՀԱ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՎԱԼԸ

ԲԱԺԻՆ 1. ՇՏԱՊ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՂԱՓՈԽՈՒՄ

13. ՀՀ ամբողջ տարածքում շտապ բժշկական օգնությունն ու սպասարկումը, պացիենտի տեղափոխումը (այդ թվում հոսպիտալացումը) կազմակերպվում է շտապ բժշկական օգնության ծառայություն իրականացնող բրիգադների, ինչպես նաև «Արտագնա անհետաձգելի բժշկական օգնության արագ արձագանքման ծառայության» (սանավիա) միջոցով:
14. Ապահովագրված անձանց իրականացվում է ինչպես շտապ բժշկական օգնություն, այնպես էլ տեղափոխում՝ ՀՀ մարզային բժշկական կազմակերպություններից բացակայող ծառայությունների դեպքում մասնագիտացված բժշկական օգնություն իրականացնող բժշկական կազմակերպություններ:
15. Շտապ բժշկական օգնությունը և սպասարկումը իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով շտապ և անհետաձգելի բժշկական օգնության և սպասարկման համապատասխան տեսակի գործունեության լիցենզիա ունեցող բժշկական կազմակերպությունների կողմից:
16. Շտապ բժշկական օգնությունը և սպասարկումը ցուցաբերվում է բժշկական կազմակերպությունից դուրս (շտապօգնության կանչի վայրում, ինչպես նաև շտապ բժշկական օգնության մեքենայում՝ բժշկական տեղափոխման ժամանակ): Շտապ բժշկական օգնությունը մատուցվում է հանկարծակի արտահայտված սուր հիվանդությունների և վիճակների, քրոնիկ հիվանդությունների սրացումների դեպքում համաձայն շտապ օգնության կանչերի իրականացման և կազմակերպման գործելակարգերի՝ անվճար իրականացվում է տարեկան ոչ ավելի քան 8 անգամ, բացառությամբ՝ արտակարգ իրավիճակով, ճանապարհատրանսպորտային և դժբախտ պատահարներով պայմանավորված դեպքերի (ջրահեղձում, էլեկտրահարություն, կայծակնահարություն, ցրտահարություն, դանակահարություն, ջերմային հարված, բարձրությունից վայր ընկած, հրազենային վնասվածքներ, թափանցող վնասվածքներ, թունավորումներով պայմանավորված կանչեր, ցավ

կրծքավանդակում, հանկարծակի առաջացած սրտի ռիթմի խանգարման նշաններ, վարակիչ հիվանդությունների ախտանիշներով ուղեկցվող վիճակներ, ալերգիկ վիճակներ՝ Կվինկեի այտուցի, անաֆիլակտիկ շոկի ախտանիշներով, կենդանիների կծած վերքեր, օձի, կարիճի, միջատների խայթոց, վնասվածքներ, խոշոր ոսկրերի կոտրվածքների և խոշոր հոդերի հոդախախտերի նշաններով արտահայտված վնասվածքներ, այրվածքներ, տեսողության հանկարծակի կորուստ, սուր առաջացած շնչառական խանգարումներ, գիտակցության խանգարումներ, ցնցումային համախտանիշ, նախածննդյան և հետծննդյան շրջանների բարդություններ):

17. ՀՀ մարզային բժշկական կազմակերպություններից ապահովագրված անձինք Երևանի կամ մարզային այլ նեղ մասնագիտական ծառայություններ մատուցող բժշկական կազմակերպություններ տեղափոխման, այդ թվում օդային ճանապարհով տեղափոխման ենթակա են **Հավելված 4**-ի ցանկում առկա հիվանդությունների և վիճակների դեպքում, եթե տվյալ կազմակերպությունում բացակայում են ցանկում նշված հիվանդությունների և վիճակների դեպքում դրանց պատճառների հայտնաբերման և բուժման համար համապատասխան ախտորոշման և համալիր բուժօգնության տրամադրման ֆիզիկական, տեխնիկական և մասնագիտական հնարավորությունները:

ԲԱԺԻՆ 2. ԱՐՏԱՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ

18. ԱՀԱ շրջանակներում արտահիվանդանոցային բժշկական օգնությունը և սպասարկումը մատուցվում է արտահիվանդանոցային պայմաններում ծառայություններ մատուցելու լիցենզիա ունեցող պոլիկլինիկաներում (այդ թվում՝ բուժմիավորումների, բժշկական կենտրոնների պոլիկլինիկաներում), գյուղական առողջության կենտրոններում, գյուղական բժշկական ամբուլատորիաներում, առողջության առաջնային պահպանման կենտրոններում (ներառյալ նրանց կազմում գործող բուժակ-մանկաբարձական կետերը), ընտանեկան բժիշկների անհատական կամ խմբային անկախ պրակտիկա իրականացնող բժշկական հաստատություններում կամ անհատ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնողների կողմից, ախտորոշիչ կենտրոններում, բժիշկների մասնագիտացված պրակտիկաներում, ստոմատոլոգիական մասնագիտացված կենտրոններում:

19. Առողջության առաջնային պահպանումը (այնուհետև՝ ԱԱՊ) բժշկական հաստատություններում իրականացվում է բնակչի կողմից ընտրված ԱԱՊ ծառայություններ մատուցող ավագ բուժաշխատողի (այսուհետ՝ ԱԱՊ բժիշկ) և տվյալ

ԱԱՊ բժշկի թիմի (տեղամասային բուժքույր, դպրոցի բուժքույր, դեռահասի կաբինետի բուժքույր, ԲՄԿ բուժքույր, միջամտությունների բուժքույր) կողմից:

20. ԱՀԱ շրջանակներում ԱԱՊ բժշկի մոտ գրանցված ապահովագրված անձանց տրամադրվող բժշկական օգնությունը և սպասարկումն ընդգրկում է.

1) **Կանխարգելիչ բժշկական ծառայություններ.**

Ա. առողջապահական հարցերով կրթում (առաջնային կանխարգելում)՝ համաձայն Հավելված 5-ի,

Բ. առողջության սքրինինգներ՝ առողջության առաջնային պահպանման զգայունակ հիվանդությունների վաղ հայտնաբերման նպատակով (առաջնային կանխարգելում)՝ համաձայն Հավելված 5-ի,

Գ. քրոնիկ հիվանդությունների շարունակական հսկողության ընթացքում հիվանդությունների բարդությունների կանխարգելման նպատակով իրականացվող սքրինինգներ (երկրորդային կանխարգելում)՝ գործելակարգերով սահմանված ծավալների համաձայն:

Դ. մինչև 18 տարեկան երեխաների աճի և զարգացման հսկողություն՝ համաձայն ԱՆ կողմից հաստատված ծավալների,

Ե. կանխարգելիչ պատվաստումների ապահովում (պլանային, ինչպես նաև համաճարակաբանական ցուցումով)՝ համաձայն Կառավարության կողմից հաստատված պատվաստումների ազգային օրացույցի և ԱՆ կողմից հաստատված կարգի,

Զ. հղիների նախածննդյան և հետծննդյան բժշկական հսկողություն 42 օր՝ համաձայն ԱՆ կողմից հաստատված ծավալների,

Է. հղիության պլանավորման նպատակով խորհրդատվություն և հետազոտում՝ համաձայն ԱՆ կողմից հաստատված ծավալների:

Ը. նախազորակոչային և զորակոչային տարիքի անձանց առողջության գնահատման նպատակով հետազոտությունների ապահովում ըստ հաստատված ծավալի,

2) **Ախտորոշիչ ծառայություններ**

Ա. կանխարգելիչ հետազոտությունների արդյունքում շեղումների հայտնաբերման դեպքում լրացուցիչ ախտորոշիչ հետազոտությունների իրականացում կամ ուղեգրում,

Բ. մասնագիտական հիվանդությունների կանխարգելման նպատակով՝ ըստ մասնագիտությունների գրանցված բնակչության համապատասխան հետազոտությունների իրականացման ապահովում,

Գ. բարձր ռիսկի խմբի հղիների հսկողության ընթացքում պարտադիր ծավալի մեջ ներառված հետազոտությունների ապահովում,
Դ . Բժշկական ցուցման դեպքում ախտորոշման ճշտման նպատակով ապահովագրված անձանց համապատասխան հետազոտությունների ապահովում՝ համաձայն գործելակարգերով սահմանված ծավալների:

3) Բժշկական օգնության ծառայություններ

Ա. հիվանդության կամ վնասվածքի դեպքում ԱԱՊ բժշկի կամ վերջինիս ուղեգրմամբ նեղ մասնագետի խորհրդատվություն՝ բժշկական ցուցումների հիման վրա ուղեգրում **Հավելված 6**-ում ներառված լաբորատոր-գործիքային հետազոտությունների իրականացում և բուժման նշանակում, նեղ մասնագետի կամ մասնագիտական թիմի հետ միասին հիվանդության վարում.
Բ. Ապահովագրվածի կողմից հիմնավորված պահանջով և ԱԱՊ բժշկի կողմից գնահատված ցուցման դեպքում նեղ մասնագետի խորհրդատվության ուղեգրում երկրորդ կարծիքի ստացման նպատակով:
Գ. բժշկական ցուցումներով անհետաձգելի դեպքերում փոքր վիրաբուժական միջամտություններ՝ համաձայն ԱՆ հրամանով հաստատված ցանկի:
Դ. ԱԱՊ բժշկի կամ նեղ մասնագետի նշանակմամբ բժշկական միջամտությունների (ներարկումների) իրականացում (ենթամաշկային, միջմկանային, ներերակային և այլն) միջամտությունների սենյակներում, ցերեկային ստացիոնարներում,
Ե. ֆիզիկական անկարողություն՝ շարժողական ֆունկցիայի խանգարման հետ կապված, ինչպես նաև ֆիզիկապես անհնարինության դեպքերում (անկողնային վիճակ՝ պայմանավորված որևէ քրոնիկ հիվանդությամբ), տնային պայմաններում բժշկի նշանակմամբ միջին բուժաշխատողի (այսուհետ՝ բուժքրոջ) կողմից աշխատանքային ժամերին կատարվող միջամտությունները (վիրակապություններ, միջմկանային, ներերակային, ներմաշկային միջմաշկային ներարկում):
Զ. ԱԱՊ բժշկի, իսկ առանձին հիվանդությունների դեպքում՝ համապատասխան մասնագետի նշանակմամբ քրոնիկ հիվանդությունների և վիճակների շարունակական (դիսպանսեր) հսկողության նպատակով, ինչպես նաև **ամբուլատոր պայմաններում բուժման ենթակա** հիվանդությունների և վիճակների դեպքերում դեղերով ապահովում՝ համաձայն Կառավարության որոշմամբ հաստատված դեղերի ցանկի և դրանց տրամադրման կարգի,
Է. սուր և անհետաձգելի դեպքերում ԱԱՊ բժշկի կողմից աշխատանքային ժամերին տնային այցերի կազմակերպում և իրականացում՝ պացիենտի բժշկական հաստատություն այցելելու ֆիզիկապես անհնարինության դեպքերում (անկողնային

վիճակ՝ պայմանավորված որևէ հիվանդությամբ, ֆիզիկական անկարողություն՝ շարժողական ֆունկցիայի խանգարման հետ կապված),

Ը. ըստ բժշկական ցուցումների պացիենտների հոսպիտալացման կազմակերպում (էլեկտրոնային ուղեգրում, անհրաժեշտության դեպքում պացիենտի տեղափոխման կազմակերպում),

Թ. հետհիվանդանոցային սուր և ենթասուր վերականգնողական բուժման շարունակական կազմակերպում՝ համաձայն բուժող բժշկի նշանակման և բժիշկ-վերականգնողաբանի խորհրդատվության,

Ժ. տուբերկուլյոզով, շրջապատի համար վտանգ ներկայացնող վարակիչ հիվանդություններով, կախվածություն և հոգեկան առողջության խնդիր ունեցող պացիենտների, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով անձանց հաշվառում, նրանց վերաբերյալ տվյալների հաղորդում համապատասխան մասնագիտացված կենտրոններ, հաստատված գործելակարգերի հիման վրա նրանց հսկողություն, շարունակական բուժման և հիվանդությունների բարդությունների կանխարգելման համար անհրաժեշտ դեղերի, պարագաների տրամադրման, լաբորատոր-գործիքային հետազոտությունների իրականացման ապահովում,

4) **արտահիվանդանոցային մասնագիտացված խորհրդատվություն և բուժում**

ա. կանխարգելիչ հետազոտությունների արդյունքում շեղումների հայտնաբերման դեպքում մասնագիտացված խորհրդատվության ուղեգրում,

բ. մասնագիտական հիվանդությունների կանխարգելման նպատակով՝ ապահովագրված անձանց համապատասխան մասնագիտական խորհրդատվության ապահովում,

գ. Հղիների հսկողության ընթացքում պարտադիր ծավալի մեջ ներառված մասնագիտացված խորհրդատվության ապահովում.

- նորմալ հղիության դեպքում՝ մինչև 8 խորհրդատվություն մանկաբարձ գինեկոլոգի կողմից
- բարդ ընթացքով հղիության դեպքում՝ ուղեգրում մասնագիտացված կենտրոնում հսկողության նպատակով
- ուղեգրում ստոմատոլոգի մոտ՝ կանխարգելիչ զննման նպատակով,
- էքստրագենիտալ հիվանդությունների դեպքում ուղեգրում համապատասխան նեղ մասնագետի խորհրդատվության:

դ. արտահիվանդանոցային բուժման ընթացքում ուղեգրում համապատասխան մասնագիտացված խորհրդատվության՝ ախտորոշման ճշտման և մասնագիտացված

խորհրդատվություն տրամադրելու նպատակով (առանց մասնագետների սահմանափակման),
ե. արտահիվանդանոցային բուժման ընթացքում կրկնակի ուղեգրում համապատասխան մասնագիտացված խորհրդատվության՝ բուժման ընթացքի գնահատման նպատակով՝ հիմնականում դրական դինամիկայի բացակայության դեպքում, ինչպես նաև բարդությունների դեպքում,
զ. քրոնիկ հիվանդությունների շարունակական հսկողության ընթացքում մասնագիտական այցերի իրականացում համաձայն հաստատված գործելակարգերի:

5) Պացիենտին շտապ օգնության ցուցաբերում և տեղափոխման կազմակերպում

ա. աշխատանքային ժամից դուրս սուր և անհետաձգելի դեպքերում տնային շտապ կանչերի ապահովում
բ. աշխատանքային ժամին սուր և անհետաձգելի վիճակների դեպքում տնային շտապ կանչերի ապահովում
գ. շտապօգնության հրավիրում կամ տեղափոխման կազմակերպում բուժհաստատության սեփական ավտոտրանսպորտային միջոցներով
դ. շտապօգնության կանչերի հիման վրա կանչերի պատճառների ուսումնասիրում, շտապօգնության կանչ տված բնակչի հրավիրում բուժհիմնարկ, իսկ անհնարինության դեպքում այցելություն տուն համաձայն Հավելված 7–ի:

6) Օժանդակ բժշկական միջոցառումներ

Ա. ժամանակավոր անաշխատունակության փորձաքննությունը՝ գործող նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով,
Բ. անձի ֆունկցիոնալության գնահատման ուղեգրումը,
Գ.ապահովագրված անձանց ըստ անհրաժեշտության բժշկական տեղեկանքների տրամադրումը (քաղվածք ամբուլատոր բժշկական քարտից),
Դ. առաջնային բժշկական և վիճակագրական փաստաթղթերի ամենօրյա լրացումը և էլեկտրոնային վարումը, ինչպես նաև պահանջվող կարգով ՀՀ ԱՆ և Հիմնադրամ հաշվետվությունների ներկայացումը:

21. Ստոմատոլոգիական բժշկական օգնություն

1) մինչև 18 տարեկանների համար թերապևտիկ, վիրաբուժական և օրթոպեդիկ բժշկական օգնության և սպասարկման ապահովում, 6 և 12 տարեկանների համար կանխարգելիչ սքրինինգային հետազոտություն՝ բերանի խոռոչի զննման միջոցով, իսկ ծկթման ժամկետների շեղման, ախտաբանական կծվածքի հետ կապված խնդիրների հայտնաբերման դեպքում նաև օրթոդոնտոլոգիական խորհրդատվությունը,
2) 18 տարեկան և բարձր տարիքի ապահովագրված անձանց միայն անհետաձգելի ստոմատոլոգիական բժշկական օգնություն (զննում և ատամի հեռացում, 65 և բարձր տարիքի անձանց համար՝ նաև ատամների պրոթեզավորում երեք տարվա համար),
3) Հղիների հսկողության ընթացքում ստոմատոլոգիական կանխարգելիչ այց՝ բերանի խոռոչի զննման միջոցով:

ԲԱԺԻՆ 3. ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

22. Հիվանդանոցային բժշկական օգնությունը իրականացվում է հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման համապատասխան տեսակի լիցենզիա ունեցող բժշկական կազմակերպություններում (այսուհետ՝ բժշկական կազմակերպություն)՝ Հիմնադրամի և բժշկական կազմակերպության միջև հօգուտ ապահովագրված անձի կնքված ԱՀԱ շրջանակներում բժշկական օգնության և սպասարկման համապատասխան ծառայությունների մատուցման պայմանագրի համաձայն:
23. Հիվանդանոցային պայմաններում բուժօգնությունը ներառում է բուժման համար անհրաժեշտ ամբողջ ծավալը, այդ թվում՝ առավելագույնը երեք հիվանդի համար նախատեսված հիվանդասենյակի ապահովումը, անհրաժեշտ մասնագիտացված խորհրդատվությունները, լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների իրականացումը, կոնսերվատիվ և վիրահատական բուժումը, վիրահատական և ֆիքսող միջոցները, բուժական միջամտությունները, անհրաժեշտ դեղորայքով, արյան բաղադրամասերով և բժշկական պարագաներով ապահովումը, բուժանձնակազմի, ինչպես նաև վարչական աշխատակազմի վարձատրությունը, կոմունալ և տնտեսական ծախսերը, ամորտիզացիոն հատկացումները և կապիտալ ծախսերը:

24. ԱՀԱ շրջանակներում ապահովագրված բնակչությանը տրամադրվող հիվանդանոցային բժշկական օգնությունը և սպասարկումն ընդգրկում է.

1)բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը վերակենդանացման միջոցառումներ և ինտենսիվ թերապիա պահանջող հիվանդությունների և վիճակների դեպքերում՝ համաձայն հավելված 11–ի,

2) հիվանդանոցային պայմաններում անհետաձգելի ծառայությունների, այդ թվում emergency-ի տրամադրումը՝ անհետաձգելի բժշկական օգնություն պահանջող վիճակների և ախտորոշումների դեպքերում՝ համաձայն հավելված 11–ի,:

3) սիրտ-անոթային հիվանդությունների բուժում՝ այդ թվում սրտային վիրաբուժություն, առիթմոլոգիա, էնդովասկուլյար վիրաբուժություն, ընդ որում 18 տարեկան և բարձր տարիքի անձանց սրտի ստենտավորում մինչև 3 դեղապատ ստենտի տեղադրմամբ, իսկ առիթմոլոգիական ծառայությունների դեպքում՝ սարքի տեղադրում առնվազն 3 տարի շահագործմամբ, Էնդովասկուլյար վիրաբուժություն մինչև 78 տարեկան ապահովագրված անձանց,

4) չարորակ նորագոյացությունների վիրահատության և ճառագայթային բուժման ծառայություններ, ինչպես նաև քիմիոթերապևտիկ, իմունոթերապևտիկ, հորմոնալ, թիրախային բժշկական օգնություն և սպասարկում, ընդ որում 18 տարեկան և բարձր տարիքի ապահովագրված անձանց չարորակ նորագոյացությունների ճառագայթային բուժում մինչև 24 սեանսի հատուցմամբ, չարորակ նորագոյացությունների դեղորայքային բուժումը (քիմիոթերապևտիկ, իմունոթերապևտիկ, հորմոնալ, թիրախային)՝ մինչև 1,2 մլն դրամի չափով հատուցմամբ,

5) մանկաբարձություն, նախածննդյան և հետծննդյան բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ,

6) մանկական և նորածնային վիրաբուժության, գինեկոլոգիական, ընդհանուր վիրաբուժական, ուռուցքաբանական վիրաբուժական, ինտերվենցիոն սրտաբանական, նյարդավիրաբուժական, այդ թվում մինչև 18 տարեկան երեխաների համար շունտավորող համակարգերի փոխհատուցում, քիթ-կոկորդ-ականջաբանական, ակնաբանական, կրծքային վիրաբուժական, սրտային վիրաբուժական, անոթային վիրաբուժական, ուրոլոգիական, պրոկտոլոգիական, վնասվածքաբանական, այդ թվում մետաղական կոնստրուկցիաների փոխհատուցմամբ՝ հարթակ, մեխ, շյուղեր, օրթոպեդիական՝ այդ թվում կոնք-ազդրային հոդի էնդոպրոթեզի փոխհատուցմամբ, հարթակ, մեխ, շյուղեր պլաստիկ վերակառուցողական, մանկական վիրաբուժական, միկրովիրաբուժական, դիմածնոտային վիրաբուժական, նորածնային վիրաբուժական,

անոթանեյրովիրաբուժական, ինչպես նաև վերջույթների և (կամ) դրանց առանձին սեգմենտների պրոթեզավորումը, պրոթեզները, բժշկական սարքավորումները (կարող գլխիկները, արթրոսկոպիկ վիրահատությունների ժամանակ օգտագործվող խարիսխները, ինտերֆերենտ պտուտակները, կախակալ ֆիքսացիոն համակարգերը, բարձր կայունության թելերը և ժապավենները, սառը աբլյացիոն էլեկտրոդները), կլիպսները՝ նյարդավիրաբուժական վիրահատությունների ժամանակ, շունտավորող համակարգերը՝ նյարդավիրաբուժական վիրահատությունների ժամանակ, ստորին վերջույթների՝ խոշոր և պերիֆերիկ զարկերակների ստենտավորում՝ առավելագույնը 3 ստենտ, բալոնային դիլատացիա՝ առավելագույնը 3 բալոն, անգիոպլաստիկա, քարափշրում (լիթոտրիպսիա)՝ հեռահար, պերկուտան, ֆիբրոուրեթերոռենոսկոպիկ, սկլերոպլաստիկա, կեռատոպլաստիկա՝ առանց փոխպատվաստման նյութի արժեքի, սիներակի (Վ.Կավա/V.Cava) ֆիլտրի տեղադրում (ներառյալ ֆիլտրի արժեքը), այդ թվում՝ ժամանակավոր,

7) հիվանդանոցային բուժման հստակ ցուցումների (Հավելված 8) առկայության դեպքում թերապևտիկ հիվանդությունների հիվանդանոցային բուժում, ընդ որում քրոնիկ հիվանդությունների դեպքում արտահայտված սրացումների բուժում՝ մինչ վիճակի կայունացումը,

8) հեմոդիալիզի ծառայությունների տրամադրում,

9) ինֆեկցիոն հիվանդությունների, այդ թվում տուբերկուլյոզի, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, վարակիչ հիվանդությունների բուժում,

10) հոգեբուժական հիվանդությունների և կախվածությունների բուժում,

11) Սուր և ենթասուր վերականգնողական բուժօգնություն:

26. Հիվանդանոցային և արտահիվանդանոցային պայմաններում բուժօգնության և սպասարկման ծառայությունների նկարագրերը ներկայացված են Հավելված 9-ում:

ԳԼՈՒԽ 5. ԱՀԱ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԴԵՊՔԵՐԻ ՑԱՆԿ

27. ԱՀԱ-ի շրջանակներում հատուցման ենթակա չեն.

1) ՀՀ կառավարության 2003 թվականի մարտի 27-ի թիվ 347-Ն և 2004 թվականի հուլիսի 15-ի թիվ 1089-Ն որոշումներին համապատասխան նախնական (աշխատանքի ընդունվելիս) և պարբերական (աշխատանքի ընթացքում) բժշկական զննությունները,

2) տնային պայմաններում լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների իրականացումը,
3) առանց բժշկական ցուցումների և առանց համապատասխան ուղեգրման, այդ թվում՝ ապահովագրված անձի ցանկությամբ բժշկական խորհրդատվությունը և լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունները, ինչպես նաև այն քաղաքացիների այցերը, որոնք գրանցված չեն ԱԱՊ բժշկական հաստատությունում աշխատող ԱԱՊ բժշկի մոտ,
4) Շտապ բժշկական օգնությունը՝ տարեկան 8 կանչից ավել:
5) ԱՓ-ով չնախատեսված ցանկացած ծառայություն (հետազոտություն և/ կամ բուժում), ԱՓ-ով չնախատեսված հիվանդության հայտնաբերման համար կատարվող հետազոտություններ,
6) Սուր և ենթասուր վերականգնողական բուժման ընթացքում իրականացվող ֆիզիոթերապևտիկ բժշկական օգնությունը՝ տարեկան 10 սեանսից ավել,
7) Սուր և ենթասուր վերականգնողական բուժման 46-ից ավել օրերը
8) բազմապրոֆիլ բժշկական կազմակերպության վերականգնողական բաժանմունքում կամ մասնագիտացված վերականգնողական կենտրոնում սուր և ենթասուր վերականգնողական բուժման համար ստորև սահմանված օրերի քանակը գերազանցող օրերը՝

   ա.ողնուղեղի հիվանդությունների կամ վնասվածքների դեպքում՝ անընդմեջ առավելագույնը 168 օր.

   բ. գլխուղեղի հիվանդությունների կամ վնասվածքների դեպքում՝ անընդմեջ առավելագույնը 120 օր.

   գ. այլ հիվանդությունների կամ վիճակների դեպքում՝ անընդմեջ առավելագույնը 46 օր:
9) զենք ձեռք բերելու թույլտվություն ստանալու համար բժշկական եզրակացություն տրամադրելու նպատակով իրականացվող բժշկական ստուգումը (համապատասխան մասնագիտական խորհրդատվություններ, անհրաժեշտ լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ),
10) արտերկիր մեկնող մեծահասակի առողջական վիճակի վերաբերյալ բժշկական եզրակացություն տրամադրելու նպատակով իրականացվող բժշկական զննումը՝ այդ թվում մասնագիտական խորհրդատվությունները, լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունները,
11) երեխա որդեգրելու կամ խնամակալության համար դիմած անձի առողջական վիճակի վերաբերյալ բժշկական եզրակացության տրամադրման նպատակով,

մասնագիտական խորհրդատվությունները, անհրաժեշտ լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունները,

12) վարորդական իրավունքի վկայական ունեցող, ինչպես նաև վարորդի թեկնածու համարվող անձանց բժշկական հավատարմագրման տեղեկանքի տրամադրման համար իրականացվող մասնագիտական խորհրդատվությունները և անհրաժեշտ լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունները, բացառությամբ ՀՀ Զինված ուժերի կարիքների համար պատրաստվող վարորդի թեկնածուի և/կամ վարորդների,

13) դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների բացակայության մասին տեղեկանքի տրամադրման համար անհրաժեշտ մասնագիտական խորհրդատվությունները և լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունները,

14) դատախազի և դատախազության, պետական ծառայության պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների բացակայության մասին տեղեկանքի տրամադրման համար անհրաժեշտ մասնագիտական խորհրդատվությունները և լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունները,

15) հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու դեպքում լիազորությունների իրականացմանը, ինչպես նաև ուսումնական հաստատություններում մանկավարժական կամ վարչական գործունեության կատարմանը խոչընդոտող հիվանդությունների բացակայության վերաբերյալ տեղեկանքի տրամադրման համար անհրաժեշտ մասնագիտական խորհրդատվությունները և լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունները,

16) դատական կարգադրիչի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող հիվանդությունների բացակայության մասին տեղեկանքի տրամադրման համար անհրաժեշտ մասնագիտական խորհրդատվությունները և լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունները, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 06-ի N 86-Ն որոշման,

17) հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող պաշտոններ զբաղեցնող անձանց մոտ Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 14-ի N 1708-Ն որոշման N 2 հավելվածով նախատեսված հիվանդությունների առկայության կամ բացակայության մասին տեղեկանքի տրամադրման համար անհրաժեշտ

մասնագիտական խորհրդատվությունները և լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունները,

18) քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող հիվանդությունների առկայության կամ բացակայության մասին տեղեկանքի տրամադրման համար անհրաժեշտ մասնագիտական խորհրդատվությունները և լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունները՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի ապրիլի 02-ի N 350-Ն որոշման, տնային այցերը, բացառությամբ պացիենտի բժշկական հաստատություն այցելելու ֆիզիկապես անհնարինության դեպքերի (անկողնային վիճակ՝ պայմանավորված որևէ հիվանդությամբ, ֆիզիկական անկարողություն՝ շարժողական ֆունկցիայի խանգարման հետ կապված),

19) կոսմետիկ, պլաստիկ և վերականգնողական միջամտություններ և վիրահատություններ, բացառությամբ երբ տվյալ միջամտությունը կամ վիրահատությունը պահանջվում է ապահովագրվելուց հետո տեղի ունեցած դժբախտ պատահարի արդյունքում կամ օրգան համակարգերի ֆունկցիաների վերականգնման նպատակով,

20) ատամների իմպլանտացիաները և պրոթեզավորումները, թերապևտիկ, վիրաբուժական, օրթոպեդիկ և օրթոդոնտիկ ստոմատոլոգիական բժշկական օգնությունը, բացառությամբ ԱՓ-ով նախատեսված դեպքերի,

21) ոչ բժշկական և սոցիալական ցուցումներով կատարվող հղիության արհեստական ընդհատում,

22) հիվանդություններ և վիճակներ, որոնք առաջացել են Ապահովագրված անձի կողմից հակաօրինական գործողությունների արդյունքում,

23) տեսողության շտկման նպատակով իրականացվող վիրահատություններ (երբ հնարավոր է ստանալ տեսողության կորեկցիա ակնոցով կամ կոնտակտային ոսպնյակներով),

24) ոչ գիտական (այլընտրանքային) մեթոդներով հետազոտությունը և/կամ բուժումը, որոնք ՀՀ կամ միջազգային բժշկական ասոցիացիաների արձանագրություններով ճանաչված չեն որպես անհրաժեշտ տվյալ հիվանդության կամ առողջական վիճակի համար, փորձարարական կամ հետազոտական բուժումը,

25) անհատական հիվանդասենյակների տրամադրումը,

26) ապահովագրված անձի կողմից բժշկի նշանակումներին չհետևելու կամ դրանցից հրաժարվելու արդյունքում առաջացած ծախսերը:

27) ծառայություններ կամ մեթոդներ (Հավելված 10), որոնք ունեն սահմանափակ հասանելիություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ